# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
# ՀՐԱՄԱՆ

№ 5623-Ա

## ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դատական պաշտպանության բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

27/09/2024

X

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Signed by: GHAZARYAN VAHE 2514740053

**Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի
2024 թվականի սեպտեմբերի «27»-ի N 5623 -Ա հրամանի

**ԾՐԱԳԻՐ**

**Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դատական պաշտպանության բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների**

**1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները**

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դատական պաշտպանության բաժնում աշխատանքների ծավալների կտրուկ ավելացմամբ պայմանավորված և աշխատակազմի ամբողջական չհամալրվածության բերումով անհրաժեշտություն է առաջացել ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան փորձագետ:

**2. Փորձագետին ներկայացվող պահանջները**

1) իրավաբանական բարձրագույն կրթություն.
2) հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն.
3) համապատասխան ոլորտի իրավական ակտերի իմացություն և անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը**

Փորձագետը ներգրավվում է մինչև մեկ տարի ժամկետով:

**4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը**

1) մասնակցում է Բաժնի իրավասության սահմաններում դատական ատյաններում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ պետական մարմիններում Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների շահերի ներկայացման աշխատանքներին.
2) մասնակցում է Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների անունից դատական ներկայացուցչության, անհրաժեշտության դեպքում, սահմանված կարգով դատարաններում հանդես գալու որպես հայցվորի (դիմողի), պատասխանողի, երրորդ անձի ներկայացուցչի, տուժողի շահերի պաշտպանության աշխատանքներին.
3) իրականացնում է հայցադիմումների պատասխանների (առարկությունների) կազմման աշխատանքները.

4) իրականացնում է դատական ներկայացուցչության շրջանակներում Նախարարությանը և նրան ենթակա պետական մարմիններին իրավական խորհրդատվության տրամադրման աշխատանքները:

**5. Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները**

1) Փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակային կտրվածքով՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը:
2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

**6. Աշխատանքների գնահատման չափանիշները**

1) հավաքագրել Հայաստանի Հանրապետության դատարաններում Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների անունից ստացված հայցադիմումները, դիմումները, վճարման կարգադրությունները, ինչպես նաև Նախարարության դեմ ներկայացված հայցադիմումների, վճարման կարգադրությունների վերաբերյալ կազմել պատասխաններ և ներկայացնել Բաժնի պետին.
2) ուսումնասիրել Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների կողմից ներկայացված հայցադիմումների, հայցադիմումների պատասխանների, դիրքորոշումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատարանների վճիռների (որոշումների) դեմ վերաքննիչ և/կամ վճռաբեկ բողոքների և/կամ միջնորդությունների ներկայացման աշխատանքները.
3) հավաքագրել տեղեկատվություն՝ առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների մշակման համար.
4) մշակել և Բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
5) հավաքագրել համապատասխան մարմիններից ստացված մասնագիտական կարծիքները և առաջարկությունները.
6) Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների շահերի պաշտպանության շրջանակներում ուսումնասիրել դիմումն երը, միջնորդությունները, առարկությունները, անհրաժեշտ փաստաթղթերը և ա յլ նյութեր.
7) Նախարարության շահերի պաշտպանության նպատակով ուսումնասիրել իրավական ակտերը.
8) դատական ներկայացուցչության շրջանակներում ցուցաբերել մեթոդական օգնություն և խորհրդատվություն տրամադրել Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ստորաբաժանումներին:

9) ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր տարբեր դատական ատյաններում Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ներկայացուցչությունը ապահովելու և շահերը պաշտպանելու համար.
10) ծառայողական պարտականությունների կատարման համար համապատասխան մարմիններից կամ Նախարարության ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, հիմնավորումներ.
11) ծառայողական պարտականությունների կատարման համար ստանալ լրացուցիչ տեղեկություններ և նյութեր: